ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 08/06/10560-19

§ 23.09.2019 թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 17.09.2019թ. թիվ 342-78 հարցման տեղեկացնում եմ.

1. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի մամուլի քարտուղար Անահիտ Առաքելյանն է: Կոնտակտային տվյալներ՝ +374(10)59-01-71, էլ.փոստ՝ anahit.araqelyan@hti.am:
2. Տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը հրապարակված է նախարարության պաշտոնական կայքում (www.hti.am), հիպերհղումը կցվում է. (https://hti.am/main.php?lang=1&page_id=487):
3. Տեղեկատվության ազատության պաշտոնատար անձ նշանակելու վերաբերյալ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 17.07.2014թ. թիվ 290-Ա հրամանը հրապարակված է նախարարության պաշտոնական կայքի «Նախարարի հրամաններ» բաժնում, հղումը կցվում է. https://hti.am/edfiles/files/Hramanner/290A.pdf:
   Հաշվի առնելով, որ հասարակության հետ կապերի բաժնի պետի պաշտոնը թափուր է դարձել, հետևաբար, ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի և 58-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հասարակության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարի լիազորությունները վերապահվել են նախարարի մամուլի քարտուղարին:

Հ.Գ. Շնորհավորում ենք Տեղեկատվության ազատության միջազգային օրվա կապակցությամբ:

Հարգանքով
պաշտոնակատար՝ **Շ. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ**

9/23/2019

VERIFIED OCSP 9/23/2019 15:47:03 GMT+4

Signed by: MEZHLUMYAN SHAKE 6504890056

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590009, էլ. փոստ՝ staff@hti.am